

ԲԱՌԱՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՄԱՍՏԻ ԴԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՀԵՆՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կառավարումը շարահյուսական կապակցության այն եղանակն է, ըստ որի կապակցվող բառերից մեկի՝ գերադասի պահանջով մյուսը՝ ստորադասը դրվում է այս կամ այն հոլովով կամ կապով և հոլովով: Ստորադաս բառի (բառերի) ձևավորումը և քանակը պայմանավորվում են լեզվական ու արտալեզվական մի շարք գործոններով. կառավարող բառի բառաքերականական իմաստ, քերականական հատկանիշներ, ձևային կազմ, կազմություն, լեզվական ավանդույթ, հաղորդման նպատակ, բովանդակություն:

Արդի հայերենի կառավարման համակարգում ամենամիջուկաւ գերը կատարում է կառավարող բառի բառաքերականական իմաստը:

Հայտնի է, որ բառի իմաստի ուսումնասիրությամբ զբաղվում է բառագիտությունը: Բառի իմաստը մասամբ նաև ձևաբանության և շարահյուսության ուսումնասիրության առարկա է: Բայց լեզվի այս տարրեր մակարդակները բառիմաստն ուսումնասիրում են տարբեր ելակետերից, տեսանկյուններից: Դա բացատրվում է բառիմաստի վերացության տարրեր աստիճաններով, ձևաբանության և շարահյուսության մեջ ունեցած տարբեր դերերով:

Լեզվաբանության մեջ տարբերակում են բառին բնորոշ երկու կարգի իմաստներ՝ բառական և քերականական: Ծիշտ է, որոշ լեզվաբաններ առարկում են այս տարբերակումը, բայց այն կառավարման համակարգում ընդունելի է և կիրառելի:

Բառական իմաստը լինելով վերացարկում՝ հատուկ է միայն մեկ բառի և դրանով մասնավոր է, որով բառը տարբերվում է մյուս բոլոր բառերից, նույնությամբ չի կրկնվում այլ բառերի մեջ, և հենց սրանով էլ սլաշմանավորվում է տվյալ բառի գոյությունը լեզվում իբրև այս կամ այն հասկացության անվանում: Բառական իմաստը հատուկ է բառին՝ անկախ նրա ձևաբանական փոփոխությունից, շարահյուսական կիրառությունից, բառերի հետ ունեցած կապակցությունից և նշվում է բացատրական բառարաններում:

Քերականականը ընդհանուր իմաստ է, ավելի բարձր վերացության և ընդհանրացման արտահայտություն, բնորոշ է ոչ թե մեկ բառի, այլ բառերի ամբողջական շարքերի, տվյալ խոսքի մասի մեջ մտնող բոլոր բառերին: Դա առաջին հերթին խոսքիմասային իմաստն է, որ, ի տարբերություն քերականական այլ իմաստների, բառին բնորոշ է անկախ քերականական ձևից: Իհարկե բառական և քերականական իմաստները իրարից մեկուսացած չեն: Ինչպես գրում է պրոֆ. Ս. Աբրահամյանը «Խոսքի մասային իմաստը... բառական իմաստներից կատարված արտահայտում է», «...Խոսքի մասային իմաստը իր բնույթով ու էությամբ լինելով բառական բարձր մակարդակի վերացություն, ունի նաև քերականական դեր»¹, բառերի «մասնավոր իմաստները և խոսքի մասային իմաստը բնականաբար կտրված և անկախ չեն իրարից, այլ դնում են փոխադարձ կապի ու պայմանավորվածության մեջ»²: Քառ, փայտ, փուն, սնդակ, աշակերտ բառերն այնքանով են գոյական, այնքանով են առար-

1 Մ. Գ. Աբրահամյան, Զբեղող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխադարձությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965, էջ 51:

2 Նույն տեղում, էջ 64:

կայական իմաստի կրողներ, որ անվանում են տարրեր առարկաներ և ընդհանրանում են իբրև առարկայանիշ բառեր՝ գոյականներ:

Բառերի իմաստային տարբերակումը սրանով չի ավարտվում: Բանն այն է, որ յուրաքանչյուր խոսքի մասի ներսում առկա են բառերի այնպիսի խմբեր, դասեր, որոնք իրենց իմաստով տարբերվում են այլ խմբերից, դասերից և ունեն գրանով պայմանավորված ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկություններ: Փաստորեն դա ներխոսքիմասային իմաստային սարքերակում է, իմաստային-քերականական տարբերակում: Այդ իմաստը բառականից տարբերվում է նրանով, որ բնորոշ չէ մեկ բառի, խոսքիմասային (քերականական) էլ չէ, քանի որ բնորոշ չէ տվյալ խոսքի մասի մեջ մտնող բոլոր բառերին, թեև յուրաքանչյուր բառ նաև այդ խոսքիմասային իմաստի կրողն է: Այսպես. բայերի մեջ կարող ենք առանձնացնել ջարժում արտահայտող (դնալ, վազել, քայլել, մեկնել, դալ), զգացական (վախենալ, երկյուղել, ատել, սիրել), խոսքային (ասել, պատմել, գրուցել, խոսել), ճանգված, մատուցման (տալ, մատուցել, նվիրել, բնծայել, մոտենալ, կպչել), անջատման, ելման, սկսման (հեռանալ, պոկել, ստանալ, անջատել, դուրս դալ), պատրաստման (պատրաստել, կառուցել, սարքել, շինել, գործել, հյուսել), ճարտարական (ստիպել, հարկադրել, հրամայել, պահանջել, թելադրել) և այլ իմաստներով բայերի խմբեր:

Քերականության մեջ սովորաբար առանձնացվում են այնպիսի խմբեր, որոնց մեջ մտնող բառերն ունենալով իմաստի ընդհանրություններ, ունեն նաև քերականական ընդհանրություններ՝ տարբերվելով այլ խմբերի մեջ մտնող բառերից: Դրանով են պայմանավորվում նման դասգասումների լեզվական-քերականական արժեքը և անհրաժեշտությունը: Այս իմաստով էլ նման բաժանումներով առանձնացվում են իմաստային-քերականական խմբեր, բառաքերականական խմբեր, քերականական դասեր, և այդ դասերին բնորոշ ընդհանուր իմաստը կոչվում է դասային: Ընդ որում, ձևաբանության մեջ կարող են առանձնացվել այլ խմբեր, շարահյուսության մեջ՝ ուրիշ, ելակետ ունենալով նրանց ձևաբանական հատկանիշներն ու շարահյուսական-կապակցական առանձնահատկությունները, քանի որ ձևաբանական հատկանիշներով տարբեր խմբերի մեջ մտնող բառերը կարող են ունենալ շարահյուսական-կապակցական ընդհանրություններ՝ զուգել գոյականի մասին և զուգյց գոյականի մասին, և, ընդհակառակն, ձևաբանական հատկանիշներով իրարից չտարբերող բառերը կարող են ունենալ շարահյուսական-կապակցական տարբերություններ. ճիմաբանություն և ժառանգություն, ճանդիպում և զեկուցում, գնալ և մնալ և այլն:

Անվաճից պարզ է, որ կառավարող բառի բառաքերականական իմաստը դիտելով կառավարումը պայմանավորող գործոն, նկատի ունենք այդ իմաստի երեք կարգի դրսևորումները, որոնք տարբեր աստիճանի վերացությունների արդյունք են՝ բառական, դասային (ներխոսքիմասային) և խոսքիմասային:

Ինչպես առհասարակ շարահյուսական բոլոր կապակցություններում, այնպես էլ կառավարման մեջ որոշակի դեր ունի բառական իմաստը, քանի որ այն ինքնին ենթադրում է և թելադրում, պահանջում, թե ինչ ձևավորում (և ինչ իմաստ) ունեցող ինչքան լրացումներ են անհրաժեշտ բառային իմաստի (իմաստային արժույթի) ամբողջական դրսևորման, հաղորդման լրիվության համար: Օրինակ. ուղարկել բայը պահանջում է հետևյալ հարցերին պատասխանող լրացումներ՝ ի՞նչ (հաց) ուղարկել, ո՞ւմ (բարեկամին) ուղարկել, ո՞րտե՞սից (գյուղից) ուղարկել, ի՞նչո՞վ (ավտոմեքենայով) ուղարկել, ո՞ւր (քաղաք) ուղարկել և այլն:

Բառական իմաստի դերն այնքան վճռորոշ է կառավարման հարցում, որ բոլոր լեզվաբաններ հակված են կառավարումը համարելու բառական երևույթ:

բառային մակարդակին բնորոշ բառական կապ (лексическая связь)՝ հատուկ բառական կառույցներին, բառակապակցություններին³:

Կառավարման մեջ բառի բառական իմաստի գերը ցույց տալու լավագույն օրինակներ են բազմիմաստ բայերը⁴: Արդի հայերենում կան բազմաթիվ բազմիմաստ բայեր, որոնք տարբեր իմաստներով առնում են տարբեր ձևավորում ունեցող և տարբեր իմաստ արտահայտող լրացումներ: Օրինակ. բաժանել բայը ջոկել, զատել, առանձնացնել, տարբերել, զանազանել իմաստներով բացի ուղղականով (տրականով) լրացումից, որը նրա սեռի խնդիրն է, առնում է նաև բացառականով՝ բայ+ուղղական (=տրական) +բացառական կաղապար. «Բաժանում է արհեստն արվեստից» (ՊՍ, 5, 82), «Բաժանում է երկու թշնամի երկիր մեկմեկուց» (ն. տ., 3, 155), իսկ բաշխել, տալ, մասերի վերածել իմաստներով բացառականի փոխարեն առնում է տրական՝ բայ+ուղղական (=տրական)+տրական կաղապար. տետրերը բաժանել աշակերտներին, պիոներներին բաժանել երկու ջոկատի:

Իստել բայը բնեյ, դատապարտել իմաստներով առնում է անձի տրականով խնդիր՝ ում դատել, իսկ կարծիք հայտնել, կարծիք կազմել, խորհել իմաստներով խոսքային բայ է և առնում է բացառականով կամ տրականով ու մասին կապով վերաբերության խնդիր՝ դատել ինչից, ում մասին:

Հարկ է նշել, որ հաճախ բայական բազմիմաստությունն առաջ է բերում սեռի փոփոխություն, որն էլ ինքնին նշանակում է կառավարման փոփոխություն, ուստի նման դեպքերում կարելի է ասել, որ կառավարվող բառի ձևավորումը պայմանավորված է բայի սեռով: Բայց բանն այն է, որ մի կողմից սեռային փոփոխությունը հետևանք է բայիմաստի փոփոխության, սեռի տարբերությունը՝ բազմիմաստության, մյուս կողմից նույն սեռի բազմիմաստ բայ տարբեր իմաստներով կարող է առնել տարբեր ձևավորում ունեցող խնդիրներ (ինչպես բաժանել բայը), այդ պատճառով էլ հիշյալ կարգի կառավարման տարբերությունները համարում ենք բայի բազմիմաստությամբ պայմանավորված, թեև չենք անտեսում նաև սեռը:

Բառիմաստով պայմանավորված կառավարման յուրահատկությունները լավագույնս երևում են. ասենք, անցնել բայի բազմիմաստության օրինակով: Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» արձանագրված է այս բայի 30 իմաստ, որոնցից 27-ում բայը շեղոք է, 3-ում՝ ներգործական: Բայը «որոշ տարածությամբ ճանապարհ կտրել, որոշ տարածություն գնալ» և «ուսումնասիրել, սովորել» իմաստներով ներգործական է և պահանջում է ուղղականով խնդիր՝ անցավ սարեր ու ձորեր, անցավ գետը, մեմ անցնում եմ պատմություն:

Անցել բայը շեղոք սեռի իմաստներով կիրառություններում տարբեր իմաստներով պահանջում է տարբեր խնդիրներ:

ա. «Գերազանցել, մեկից առաջ ընկնել»՝ բացառականով. անցնել հեծանվորդից, անցնել հարևան երկրից:

բ. «Խոսակցության՝ քննության նյութը փոխել, ուրիշ հարց շոշափել»՝ բացառական և տրական. ընթերցանությունից անցնել վերլուծության:

դ. «Փոխադրվել, գնալ տեղից տեղ, մեկից մյուսին»՝ ուղղական և բացառական. մի փողոցից անցնել մյուսը:

³ Այս մասին հանգամանորեն տե՛ս А. Мухом, Лингвистический анализ, теоретические и методические проблемы, Л., 1976, с. 116—117.

⁴ Բայի բառական իմաստի գերը սեռի որոշման հարցում և դրանով պայմանավորված կապակցական յուրահատկությունները վաղուց նկատված են հայ լեզվաբանների կողմից: Ա. Աբրահամյանի, Վ. Առաքելյանի, Մ. Ասատրյանի և այլոց՝ բային նվիրված աշխատություններում, ինչպես նաև «Ժամանակակից հայոց լեզու» գրքի 2-րդ հատորում կան բավականին ուշագրավ օրինակներ, վերլուծություններ:

⁵ Նշում ենք միայն այն իմաստները, որոնք առաջ են բերում կառավարման տարբերություններ:

գ. «Զգվել, տարածվել, ընկած լինել, հոսել»՝ գործիականով. նաև ապարհըն անցնում էր լեռներով ու ձորերով, ձորով հեղեղ էր անցնում:

ե. «Խորը գնալ, մտնել»՝ տրական-մեջ կամ ուղղական. գնդակն անցավ բոֆերի մեջ (բոֆերը) և այլն:

Այլ իմաստներով ընդհանուր լրացումներից բացի ուրիշ լրացումներ չի պահանջում, ինչպես. «հնա՛նալ, ժամանակին չհամապատասխանել»՝ շուխտյո ժամանակն անցել է, «ըստ ժամանակի հեռանալ, անցյալ դառնալ»՝ Մանկության օրեր, երագի նման անցա՛ք գնացի՛ք (Մ. Նալբանդյան):

Ասենք, որ հայերենում բավականին շատ է այն բայերի թիվը, որոնք տարբեր իմաստներով ստեղծում են տարբեր ձևավորում (և իմաստ) ունեցող լրացումներ. աղաղակել, անդադարառնալ, ապրել, աշխատել, բռնել, գործել, երկարել, զարկել, զիջել, ժայթել, ժանգոտել, լալ, լսել, խաղալ, խանգարել, խըմել, խոսել, ծաղկել, համատեղել, հոգալ, նստագայթել, մաղել, մարել, նվագել, շատովանել, շնչել, ողբալ, պարապել, պարզել, պրծնել, սովորել, սուլել, սպասել, փշել և այլն:

Վկայակոչենք մեկ-երկու օրինակ. «Աշխատում էր գլուխը կախ» (ՀՄ, 287) և «Շրջեր ու բոցեփակվով փող աշխատեր» (ԱԲ, 640):

«Զարկել է սուրբ մարմարին» (ԵԶ, 2, 214) և «Վտակը զարկում է ավաղին, շաշում է, ճշում» (ՀԹ, 2, 32):

«Ծաղկել է նորից իմ այգին» (ՎՏ, 247) և «Եվ եղյամը ծաղկում էր ծառերը» (ՍԶ, 7, 278) և այլն:

Բառի բառական իմաստի հետ սերտորեն կապված է համանիշ բառ հասկացությունը: Ինչպես դիտենք, համանիշ են այն բառերը, որոնք արտահայտում են նույն կամ մոտ իմաստ: Բանի որ համանիշ հասկացությունը ենթադրում է առնվազն երկու բառի գոյություն, և, ինչպես ցույց են տալիս Ա. Սուրիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանի» փաստերը, համանիշ բառերի թիվը սովորաբար երկուսից ավելի է, ուստի առաջանում են համանիշների շարքեր, որոնց «հիմքում ընկած է միևնույն հասկացությունը նշանակող, երկու կամ ավելի բառերի կամ դարձվածքների իմաստների մոտությունը կամ նույնությունը...»⁶: Հենց այս բառային իմաստների մոտությամբ կամ նույնությունով պայմանավորված՝ համանիշների շարքի միավոր բառերն առնում են նույն լրացումները: Պայմանականորեն անտեսելով բոլոր բառերին ընդհանուր լրացումները՝ բերենք համանիշների շարքեր, նշելով նրանց բնորոշ, համանշային իմաստով պայմանավորված լրացումները:

Վախենալ, երկուղել, սոսկալ, զարհուրել, սարսափել, սահմռկել, անաբեկվել, սարսռալ, լեղին պատռել, սիրտը դող ընկնել և այլն՝ ինչից, ումից: Ոգևորել, խրախուսել, փառաբանել, հորդորել, ներշնչել, ոգեշնչել, քնավորել, սրապանդել և այլն՝ ում, ինչով (նաև անորոշ դերբայով լրացում):

Բարկանալ, նեղանալ, շարանալ, շղայնանալ, գայրաճալ, կատաղել և այլն՝ ում վրա, ինչից:

Հիանալ, սփանշանալ, զմայլվել, հափշտակվել, գերվել, հմայվել, հրապուրվել և այլն՝ ումով, ինչով:

Մտածել, դատել, խորհել, խորհրդածել, մտմտալ, մտորել և այլն՝ ինչի, ում մասին:

Մտերմանալ, մոտիկանալ, մոտենալ, բարեկամանալ, ընկերանալ և այլն՝ ում հետ:

Հայտնի է, որ բառերը մեծ մասամբ բազմիմաստ են, և բազմիմաստ բառը տարբեր իմաստներով դառնում է համանշային տարբեր շարքերի անդամ, և այստեղից էլ համանշային շարքի անդամների փոխադարձ փոխարինելիություն և դրա բացառման հնարավորությունը: Այս հարցը բավականին հանգամանորեն բացատրել է Ա. Սուրիասյանը. «Բազմիմաստ բառը իր բոլոր իմաստ-

⁶ Նույն ձևավորումն ունեցող լրացումները հաճախ առերբրվում են իրարից արտահայտած հարաբերության իմաստով:

⁷ Ա. Սուրիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1971, էջ 134:

ներով չէ, որ կարող է հոմանշային կապերի մեջ մանել և կամ իր տարբեր իմաստներով նա կարող է այդպիսի կապեր հաստատել տարբեր բառերի հետ»⁸։ Այս իմաստով էլ եթե բառը հոմանշային տարբեր շարքերի անդամ է, ապա ունենում է և կապակցական, մասնավորապես կառավարման տարբերություններ։ Օրինակ. սովորել բայը մի կողմից հոմանիշ է ընտելանալ, վարժվել բայերին, և հոմանշային շարքի անդամներն առնում են տրականով խնդիր (սովորել պայմաններին), մյուս կողմից՝ ուսանել, յուրացնել, սերտել բայերին, որոնք առնում են ուղիղ խնդիր (սովորել դասը), մեկ այլ իմաստով՝ աշակերտել, դաս առնել, հեռանգվել, մաքրվել բայերին, որոնք առնում են բացառականով խնդիր (սովորել ումից)։

Նեղանալ բայը մեկ իմաստով բարկանալ, շարճանալ, զայրանալ, ջղայնանալ բայերի հետ կազմում է հոմանշային շարք, և այդ շարքի բառերն առնում են վրա կապով արտահայտված խնդիր (նեղանալ ում վրա), մեկ այլ իմաստով հոմանիշ է վիրավորվել, խռովել բայերին և առնում են բացառականով խնդիր (նեղանալ ումից, ինչից)։

Գրավել բայը տիրանալ, տիրել, սեփականել հոմանիշների շարքում ներանց նման առնում է ուղիղ խնդիր (գրավել ինչ), ղյուրել, հմայել, հրապուրել, բովել, զերել շարքում՝ նաև գործիականով խնդիր (գրավել ինչով), իսկ ներգրավել, ներհաշել շարքում՝ ներգոյականով կամ տրականով ու մեջ կապով լրացում (գրավել ինչում, ինչի մեջ)։

Բերենք կառավարման մեջ բառի իմաստի ունեցած կարևոր դերի այլ փաստ։ Ինչպես գրում է Վ. Գակը, «նույն իմաստությամբ (սեմանտիմա) խոսքում կարող է ներկայանալ տարբեր բառերով, որոնք պատկանում են տարբեր խոսքի մասերի (հմմտ. քաջ, քաջաբար, քաջանալ, քաջություն)»⁹։ Ուրեմն՝ այդ բառերը, որ պատկանում են տարբեր խոսքի մասերի, արմատական իմաստով նույնն են, և, պայմանավորված այդ ընդհանրությամբ (իմաստությամբ) կարող են առնել նույն լրացումները (հոլովական կամ հոլովակապային)՝ Բերենք մի քանի օրինակ։

Ազատ, ազատել և ազատում՝ բացառական
գոհ, գոհացում, գոհանալ՝ գործիական
գեկույց, գեկուցիլ, գեկուցում՝ տրական, տրական+մասին
գրույց, գրուցել՝ բացառական, տրական+մասին, հետ
ծանոթ, ծանոթանալ, ծանոթություն՝ տրական, տրական+հետ
հեռու, հեռանալ, հեռացում, հեռավորություն՝ բացառական
հպարտ, հպարտանալ, հպարտություն՝ գործիական
հվեր, հվիրել, հվիրում, հվիրված՝ տրական
ոլկառ, պակասել, պակասություն՝ բացառական
տարբեր, տարբերել, տարբերություն՝ բացառական և այլն։

Կառավարման համակարգում բառիմաստի վճռական դերը լավագույնս երևում է նաև այն դեպքերում, երբ բայը գործածվում է փոխաբերական իմաստով, որը նրա խոսքային իմաստն է, խոսքից դուրս այդ իմաստը բային բնորոշ չէ։ Բուրել, մոմոալ, խշշալ, շաշել, շառաշել, մորմոխել, որոտալ, բառաշել, մորկել, մրմնջալ, մշմշալ, ղողանջել, քարտալ, հեալ, շեփոքել, գոռալ, փսփսալ, կռվել, կարկաշել, հեկեկալ, զառանցել, կոնշալ, մշուշել, շշնջալ, հագալ, մոլտալ, շրշալ և այլ բազմաթիվ բայեր փոխաբերական գործածությամբ առնում են ուղիղ խնդիր՝ վերածվելով ներգործականների. «Քո փառքին երգ է շրշում» (ՀՄ, 118), «Օներաշին հրաման էր մոլտում» (ՀՔ, 29), «Ու հեռախոսը խոսքից հագում է շիֆր» (ԵԶ, 2, 192), «Շշնջում էր մայրս աղաչանքները խոսքին» (ՌԴ, 191), «Քթի տակ դեղնում էր մի երգ» (ԱԲ, 433), «Աղբյուր ու գուսան երգ են կարկաշում» (ՄԿ, 1, 160), «Իմ կարտները կրծքիդ հեկեկում» (ՎԴ, 44), «Մի հավի լուսայգ շեփոքեց կտուրենն ի վեր» (ՊՄ, 4, 9), «Միրալ

⁸ Նույն տեղում, էջ 137։

⁹ В. Гак, К эволюции описовых речевой номинации («Вопросы языкознания», 1985, № 4, с. 35).

հույս ու տազնապ է քայրտում» (ՄԳ, 148), «Շաշի անկումը, վերջը Հիտլերի» (ՆՁ, 1, 178) և այլն:

Ինչպես ասացինք, կառավարման մեջ որոշակի դեր ունի բառի խոսքի-մասային իմաստը: Առհասարակ խոսքիմասային իմաստը որոշիչ, փնտախան նշանակություն ունի շարահյուսական կապակցելիության հարցում: Իսկ նթի նկատի ենք ունենում մասնավորապես կառավարումը, ապա ընդհանուր առմամբ նկատելի է, որ գործողություն ցույց տվող բառերը՝ բայերը կառավարող բառեր են, որոնց դիմավոր և անդեմ ձևերն առնում են հոլովական և հոլովակապային նույն լրացումները, որոնք արտահայտում են խնդրային, պալովակապային և ստորոգելիական իմաստներ: Առարկա ցույց տվող բառերը՝ գոլականներն առնում են հոլովական լրացումներ (որոշչային հարաբերություն), նրանց մի մասը՝ հոլովական և հոլովակապային լրացումներ (խնդրային և պարագայական հարաբերություն): Հատկանիշ ցույց տվող բառերի (ածականների) մի մասն առնում է հոլովական, երբևէ նաև հոլովակապային լրացումներ, որոնք արտահայտում են խնդրային իմաստ: Մյուս խոսքի մասերին կառավարումը բնորոշ չէ: Բոլորովին այլ է կապերի կառավարումը:

Ասացինք, որ նույնարմատ տարբեր խոսքի մասեր առնում են նույն լրացումները՝ պայմանավորված արմատական իմաստի ընդհանրությամբ: Բայց նման բառերի մի մասը, արդեն պայմանավորված խոսքի մասային իմաստով, առնում է տարբեր լրացումներ: Օրինակ. ակնածել և ակնածանք գրողից, բայց նաև ակնածանք գրողի նկատմամբ, որ բնորոշ չէ ակնածել բային: Այս տարբերությունն ավելի ակնառու երևում է նույնարմատ բայանոթն գոյականների և անցողական բայերի համեմատությունից: Անցողական բայերն առնում են ուղիղ խնդիր՝ ուղղականով կամ տրականով. բացանայտել սխալը, աղավաղել ելույթը, իջեցնել երեխային, քնքեցել գիրք, կառուցել շենք, մշակել քեմալը, բարձրացնել ֆարը, մոտեցնել աթոռը, հիշեցնել դասը և այլն: Նույն բայերին համապատասխան բայանոթն գոյականներն այլևս ուղիղ խնդիր չեն առնում, այլ ստանում են տրականով ձևավորված լրացում, որոնք խորքային կառուցվածքով փաստորեն խնդիրներ են, սակայն մակերեսային կառուցվածքով՝ հատկացուցիչ: սխալի բացանայտում, ելույթի աղավաղում, գրքի քնքեցում, շենքի կառուցում, քեմալի մշակում, ֆարի բարձրացում, աթոռի մոտեցում, դասի հիշեցում և այլն:

Հայերենի կառավարման ամակարգում որոշակի դեր ունի իմաստի մեկ այլ դրսևորում՝ ներխոսքիմասային իմաստը, որը նպատակահարմար է կոչել դատային: Ինչպես ասվեց, դա բնորոշ է տվյալ խոսքի մասի մեջ մտնող բայերի մի մասին, առանձին խմբերի: Ասենք, որ ինչպես բայերի, այնպես էլ այլ խոսքի մասերի իմաստային խմբավորումները և նրանց կապակցական առանձնահատկությունները կարող են հանգամանալից ուսումնասիրության, թեև այս ուղղությամբ առանձին դիտողություններ, փորձեր կան հայ լեզվաբանների աշխատություններում:

Առհասարակ երբ խոսում ենք բայերի կառավարման մասին, պետք է նրկատի ունենանք հետևյալը. կան այնպիսի լրացումներ, արտահայտված տարբեր հոլովներով, ինչպես նաև հոլովով ու կապով, որ բնորոշ են բոլոր բայերին և խոսքիմասային իմաստի լրացումներ են: Դրանք հիմնականում պարագաներն են: Բայց կան նաև այնպիսի լրացումներ, հատկապես խնդիրներ, որոնք բնորոշ չեն բոլոր բայերին, այլ բայերի իմաստային առանձին խմբերի, դասերի, հետևաբար դրանք պայմանավորվում են բառերի դասային իմաստներով, դրվում են այդ իմաստի պահանջով: Այս առումով բայերի մեջ կարող ենք առանձնացնել հետևյալ իմաստային խմբերը՝ նշելով այդ խմբերին բնորոշ լրացումները:

Խոսքային (ասացական, մտածական) բայերն առնում են բացառականով կամ տրականով ու մասին կապով արտահայտված լրացում, որը հայ քերականագիտության մեջ հայտնի է վերաբերության խնդիր անունով և ցույց է տալիս, թե ում կամ ինչին են վերաբերում խոսքը, խոհը: Այդպիսի բայերից են՝ ասել, խոսել, պատմել, մտածել, երգել, հայտնել, բողոքել, գրել, գովել, պատել, խորհել, զառանցել, զեկուցել, զրուցել, իմանալ, լսել, հաղորդել,

հարցնել, հիշել, հառել, որոշել, վկայել, առարկել, բարբաջել, գիտենալ, ծանուցել, հեռագրել, շառախոսել, նշել, որոշել, վկայել, սակարկել և այլն. պատմել դասերից կամ դասերի մասին, խորհել անելիքների մասին, գեկուցել արդյունքների մասին, հարցնել ընկերներից կամ ընկերոջ մասին, դառել կառարկածի մասին և այլն:

Բայերի մի առանձին խումբ, որ հայտնի է կերպավորիչ, եղանակավորիչ անունով, կարող է առնել անորոշ դերբայով արտահայտված լրացում: Արանք փաստորեն այնպիսի բայեր են, որոնք դրդում են, հարկադրում, ստիպում կատարել մի այլ գործողություն, որն էլ արտահայտվում է իբրև խնդրի նկատի ունենալով իմաստային այս առանձնահատկությունը, սրանք կարելի է կոչել նաև հարկադրանքի, դրդման բայեր, ինչպես՝ աշխատել, արգելել, բարենհաճել, դադարել, երգել, թողնել, խուսափել, խոստանալ, կամենալ, հարկադրել, հրամայել, համարձակվել, համաձայնել, հանդգնել, հրավիրել, ձգտել, շահագրգռել, վճռել, պատրաստվել, պարտավորվել, ստիպել, սպառնալ, ցանկանալ, ուզենալ, փորձել և այլն. փորձեց գնալ, պատրաստվեց վագելու, համարձակվեց ներկայանալ, հրաժարվեց կարգալուց, որոշեց լուր և այլն:

Բայերի մի այլ խումբ, որ կարելի է կոչել մեծացման, մեծամոլության բայեր, առնում է տրականով կամ տրականով ու հետ կապով արտահայտված խնդրներ. բարեկամանալ, մեծամանալ, մոռենալ, ընկերանալ, եղբայրանալ, նմանվել, հաշտվել, ամուսնանալ, գինակցել, հարազատանալ և այլն. հաշտվել հարևանի հետ, բարեկամանալ պիտեներենից կամ պիտեներենի հետ, եղբայրանալ վրաց ժողովրդին կամ ժողովրդի հետ և այլն:

Անջատման, սկսման, ելման բայերն առնում են բացառականով խնդր: Այդպիսի բայերից են. սկսել, ելնել, հեռանալ, պոկել, անջատել, առաջանալ, ծագել, բխել, ստանալ և այլն. սկսել ներածականից, պոկել ծառից, անջատել հոսանքից, հեռանալ մարդկանցից և այլն:

Շարժում արտահայտող բայերն առնում են տարբեր հոլովներով տիղի պարադաներ. Երևանից գնալ Մոսկվա, բայել փողոցով, ժամանել Սովետական Միություն, սարերից կածաններով իջնել գյուղերը և այլն:

Իմաստային առանձին խումբ են կազմում այսպես կոչված վերացական բայերը, որոնք սովորաբար ինքնուրույն, առանձին շին գործածվում և առնում են ստորոգելի (ստորոգելիական վերադիր)՝ արտահայտված ուղղական հոլովով. լինել, դառնալ, թվալ, կոչել, համարել, անվանել, երևալ, հռչակել, նախաեսել, ընկնել, կանգնել, կարգել, կտրել, մնալ, ձևանալ, հանաչել, նշանակել, առաջադրել, ընտրել և այլն՝ մի մասը սովորական գործածությամբ, մյուսը՝ երկրորդաբար: Հեղվում երևում էր գյուղը և ծառը նրան մարդ երևաց, նստել է հատակին և Մուրա Մելիքն էր նստած թագավոր, նա մնաց տանը և մինչև վերջ նա մարդ մնաց:

Իմաստային այս խմբավորումները կարող ենք շարունակել, բայց մեր նպատակն է ցույց տալ դասային իմաստի դերը կառավարման հարցում և, կարծում ենք, այս օրինակներն էլ բավական են: Ավելացնենք նաև, որ դասային իմաստի դերն այնքան որոշիչ է, որ նույնիսկ նույնարմատ, բայց տարբեր խոսքի մասերի պատկանող բառերը կարող են առնել նույն լրացումները, ինչպես. խոսքային բառեր՝ գրուցել և գրույց դասերի մասին, խոսել և խոսք հայրենասիրությունից, գեկուցել և գեկուցում պլանների մասին, անջատման բայեր՝ հեռանալ, հեռու և հեռացում գյուղից, անջատ, անջատել և անջատում հոսանքից, փախչել և փախուստ իրականությունից, հանգման բայեր՝ մոռենալ և մոռեցում, մոռ նշմարաբայանը, կտակել, կտակ և կտակում ուղիներին և այլն:

Առանձին դեպքերում ստորադաս բառի քերականական ձևավորման մեջ որոշակի նշանակություն ունի կառավարվող բառի ներխոսքիմասային, դասային իմաստը այն առումով, որ իմաստային-քերականական այս կամ այն խմբին պատկանելու առանձնահատկությամբ պայմանավորվում են նրա քերականական ձևավորումը և արտահայտած հարաբերության իմաստը: Այսպես, գոյականի անձի կամ իրի անուն լինելը պայմանավորում է նրա քերականական ձևավորումը անցողական բայերի ուղիղ խնդրի պաշտոնում. անձի ուղիղ

խնդիրը սովորաբար առնվում է տրականով, իրի խնդիրը՝ ուղղականով (ներկատի շունենք անձի և իրի առումները)։ տեսնել նկարը և նկարչին, սիրել գլուղը և գլուղացիներին, նկարել դստրոցը և աշակերտներին, մոտեցնել արքունի և երեսային և այլն։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱԲ — Ա. Բակունց, Երկեր, Երևան, 1955:
 ԸԴ — Ը. Գալստյան, Բովտուն, Երևան, 1974:
 ԲԴ — Բ. Դավթյան, Մեղրահաց, Երևան, 1973:
 ՀԲ — Հ. Բումանյան, Երկեր, հ. 2, Երևան, 1958:
 ՀՍ — Հ. Սահյան, Հայաստանը երգերի մեջ, Երևան, 1962:
 ՇՄ — Շ. Մաթևոսյան, Օգոստոս, Երևան, 1967:
 ՆԶ — Ն. Ջարյան, Երկեր, հ. 1, Երևան, 1962:
 ԵԶ — Ե. Չարենց, Երկեր, հ. 2, Երևան, 1972:
 ՊՍ — Պ. Սևակ, Երկեր, հ. 3, Երևան, 1973, հ. 4, 1973, հ. 5, 1974:
 ՍԶ — Ստ. Զորյան, Երկեր, հ. 7, Երևան, 1962:
 ՍԿ — Ս. Կապուտիկյան, Երկեր, հ. 1, Երևան, 1974:
 ՎԴ — Վ. Դավթյան, Ամառային ամպրոպ, Երևան, 1964:
 ՎՏ — Վ. Տերյան, Երկեր, Երևան, 1956:
 ՀԹ — Հ. Քոչար, Սպիտակ գիրք, Երևան, 1965:

РОЛЬ ЛЕКСИКО-ГРАММАТИЧЕСКОГО ЗНАЧЕНИЯ СЛОВ В СИСТЕМЕ УПРАВЛЕНИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА

ГЕНРИК АРУТЮНЯН

Резюме

Управление как способ подчинительного сочетания слов обуславливается следующими факторами: лексико-грамматическим значением, грамматическими признаками и морфемным составом управляющего, господствующего слова, а также языковой традицией и содержанием сообщения.

В системе управления современного армянского языка самую существенную роль играет лексико-грамматическое значение управляющего слова, которое имеет три вида выражения как результат абстракции разных уровней: семантика слова, классное и частиречное. Семантика слова характерна только для одного слова, и слова имеют как сочетаемостные особенности, так и особенности управления. Классное значение характерно для группы слов, относящихся к данной части речи, а также однокоренных слов, относящихся к разным частям речи, чем и обуславливаются особенности управления этих слов. Частиречное значение характерно для всех слов, относящихся к данной части речи, чем и обуславливаются их сочетаемостные особенности.